# ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆԸ

Մոսկվայի «Սոկոլնիկի» զբոսայգում անցկացվեց մայրաքաղաքի կայծակնային խաղի 41-րդ առաջնությունը՝ «Վեչերնյայա Մոսկվա» թերթի մրցանակի համար: 22 մասնակիցների մեջ էին գրոսմայստերներ Մ. Տալը, Յու. Ռազուվաևը, Ե. Սվեշնիկովը, Վ. Անտոշինը, Ա. Վայսերը, Ե. Վասյուկովը, միջազգային վարպետ Կ. Գրիգորյանը և ուրիշներ: Մարզասերները այնպես էին շրջապատել խաղասեղանները, որ երբեմն մասնակիցները պետք է «գործով» ապացուցեին, որ շախմատը նույնպես սպորտ է: Ամենից շատ երկրպագուներ հավաքվել էին աշխարհի նախկին չեմպիոն Մ. Տալի և 66-ամյա սպորտի վարպետ Յու. Գուսևի սեղանների շուրջը: Մոսկվայի 41 առաջնություններից 40-ի մասնակից Գուսևից ամեն ինչ կարելի էր սպասել: Այդպես էլ եղավ. նա հաղթեց Ռազուվաևին, Սվեշնիկովին, Տալին, իսկ մրցաշարի միջնամասում նույնիսկ առաջատարների մեջ էր:

Տալին մրցակցություն ցույց տվեցին երիտասարդ վարպետության թեկնածու Անդրեյ Կովալյովը և Վասյուկովը: Ի վերջո, նրանք վաստակեցին համապատասխանաբար 15,5 և 14 միավոր: Հաղթողին՝ Միխայիլ Տալին (16) հանձնվեց ավանդական մրցանակը՝ փնճնահանձնվեց ավանդական մրցանակը՝ փնճնահեր, որը տասնմեկերորդը դարձավ նրա հավաքածուում:

ՅՈՒ. ԴՈԽՈՅԱՆ—Մ. ՏԱԼ

Հին հնդկական պաշտպանություն

1. d4 Ձf6 2. c4 c5 3. d5 g6 4. Ձc3 Փg7 5. e4 0—0 6. Ձf3 d6 7. h3 e5 8. g4 Ձa6 9. Փd3 Ձc7 10. Թe2 Նb8 11. Փd2 a6 12. a4 Փd7 13. b3 b5 14. a5 bc 15. bc Նb4 16. Աf1 Նb3 17. Աg2 Ձ:g4 18. hg Փ:g4 19. Թd1 Նb2 20. Փc1 Նb8 21. Փe2 Ձe8 22. Ձe1 Փd7 23. Ձf3 Ձf6 24. Փg5 Թc8 25. Ձd2 Նb4 26. Նb1 h5 27. f3 Ձh7 28. Փe3 Թd8 29. Ն:b4 cb 30. Ձa2 Թ:a5 31. Թb3 Նb8 32. Նb1 Թd8 33. Նh1 a5 34. Թb2 Փf6 35. c5 Փg5 36. Փf2 dc 37. Փ:c5 Նc8 38. Փf2 Փf4 39. Ձf1 Թg5+ 40. Ձg3 h4 41. Ձ:b4 Փ:g3 42. Փg1 Փe1+ 43. Աf1 Փ:b4, սպիտակները հանձնվեցին:



... Գրիգորյանի գործերը...»



Աշխարհի աղջիկների չեմպիոնուհի Ա. Գալյամովան հաղթեց «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթի կազմակերպած կանանց կայծակնային մրցաշարում:



# «ՇԱԽՄԱՏԸ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ Է...»

ՊԱՏՄՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ

## ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



Լրացավ անվանի նկարչի 50-ամյակը: Դա մի տարիք է, երբ մարդ ետ է նայում, ինչ-որ չափով հանրագումարի է բերում անցած տարիները, արած գործերը:

Լայն է Ռուդոլֆ Խաչատրյանի հետաքրքրությունների շրջանակը՝ արվեստ, գրականություն, փիլիսոփայություն, ֆիզիկա, հոգեբանություն... Ռ. Խաչատրյանը նաև շախմատի ջերմ երկրպագու է, նրանով տարվել է մանկուց:

Բայց ավելի լավ է խոսքը տանք նկարչին:

— Շախմատ շատ եմ սիրում: Եվ ոչ միայն այն պատճառով, որ խաղի հիմքում մարզական մենամարտն է: Նրանում գերակշռում են տրամաբանությունը, հոգեբանությունը և գեղեցկությունը:

Նկարել ու շախմատ խաղալ սովորել եմ միաժամանակ, երբ հինգ տարեկան էի: Ապրում էինք Երևանի կենտրոնում, Մարատի փողոցում: Հիմա մեր տունը, ցավոք, չկա. քանդել են: Այնտեղ հիմա մետրոյի «Լենինի հրապարակ» կայարանն է: Հենց մեր բակում էլ մեծերից խաղալ սովորեցինք ես ու եղբայրս՝ Ալբերտը (այժմ նա ՀՍՍՀ վաստակավոր արտիստ է, երգում է կապելլայում: Նա երկու բուհ է ավարտել):

Հիմա ես հազվադեպ եմ խաղում: Հատկապես սիրում եմ նայել ուրիշների խաղը և նրանց փոխարեն ուժեղագույն քայլեր գտնել: Նույնիսկ Գ. Կասպարովի և Ա. Կարպովի պարտիաները դիտելիս շատ քայլեր ես գուշակում էի: Դահլիճում ինձ հետ գտնվող ընկերներս չէին էլ կարծում, թե շախմատից որևէ կարգ չունեմ:

Շախմատը սիրում եմ ընդհանրապես, ամբողջությամբ: Ես գլուխ եմ խոնարհում այդ խաղը ստեղծողի առջև: Շախմատն ինձ անսահման է թվում, այն վերջ չունի: Շատ եմ զայրանում, պարզապես չարանում եմ, երբ Կասպարովի երկրպագուներին դուր չի գալիս Կարպովը և հակառակը: Ես Գարիկի համար եմ ցավում ոչ միայն այն պատճառով, որ նա իմ հայրենակիցն է, այլ որովհետև ընդհանրապես կողմնակից եմ երիտասարդներին, նորի ներկայացուցիչներին: Բայց ես բարձր եմ գնահատում նաև Կարպովին, ապշում եմ նրա տոկունությամբ: Երբ նա թեկուզ փոքրիկ դիրքային առավելություն ունի, ապա հանճարեղորեն է այն իրացնում:

Ես ներկա եմ գտնվել Կասպարովի և Կարպովի առաջին և երկրորդ մրցախաղերի շատ պարտիաների, եղել եմ նաև Լենինգրադում, որտեղ անցկացվում էր երրորդ մրցախաղի երկրորդ կեսը: Ի դեպ, այդ մրցախաղի պարտիաներից մեկին հետևում էի Տ. Պետրոսյանի որդու հետ միասին: Աստիճանաբար սկսեցի ավելի հազվադեպ լինել պարտիաներին, որովհետև զգացի, որ չափից ավելի ուժեր եմ ծախսում:

Ես կցանկանայի նկարել այդ երկու ականավոր շախմատիստների դիմանկարները: Շախմատն ու արվեստը ընդհանուր շատ բան ունեն: Ե՛վ շախմատիստի, և՛ արվեստագետի աշխատանքը ստեղծագործական պրոցես է: Երկուսն էլ համառ, տքնաջան աշխատանք

ISSN 0206—1910

# Շախմատային Հայաստան



11 . 1987